

մուլը նոյնը պէտք է քարոզէ և այսօր Ընդհանուր Հիմունքներին ու սկզբունքներին համաձայն որոշակի գծադրած է այդ աշխատութիւնն իր մեթոդով ու նշանակութիւններով: Հայ սօցիալ-ների աշխատութեան անմիջական միջավայրն է հայ բանտը: Պատկարացրէ, որ և կոչւած է հենց այսօր լինելու առաջադրուած գոնեւ յեզրափակական կուռում: Եւ այստեղ մենք կարող ենք աւելացնել, կրկնելով Մարգարի նոյն «Մեկնութիւններն» եզրակացութիւնը, թէ հայ սօցիալիստներն իրանց այդ աշխատութեամբ հայ բանտներէն պատրաստում են, կազմակերպում են, հասկանալի դիմագրական կուսակցութիւնը, որին ձեռք բերած ուսուցիչական սահմանադրական պայմանները կը ծառայեն իբրև գործիք աւելի աշխուժեցնելու համար միապետական կարգերի անկումից անմիջապէս յետո՛յ իր գասակարգային կուրը շահերով իրան հակառակ իշխող գասակարգերի դէմ ու ձգտելու աշխույժ անմիջական նպատակ դարձած սօցիալիստական հասարակական կազմակերպութեան հաստատման:»

Թ Ո Ւ Ի Թ Ի Կ Ա Կ Ն Ա Ր Կ Ն Ե Ր

I.

Այս է մեր երեւելի ազգայիններին սովորութիւնը: Այս է ներանց յայտնի սիստէմը, որ մեխուել և արմատացել է շամպանեան գինու ազդեցութիւնից զբերած վրձնը նրանց ուղեղներում, պատկերից, նախապապերից մնացել երեւի... Հռչակաւոր ժառանգական օրէնքով: Այսպէս սկսել են, այսպէս էլ քրոմ են իրենց հանգուցեալ պատերի էջերը, կաշառուած մամուլի էջերում, մտաւոր պոռնիկները գրչակներին երբեք չեն արժանանալու և ոչ ընթացիկ, դաստիարակեալ ու բա-

Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն
Ա Ն Ի Թ Ա Ն Ո Ւ Թ Ի Ի Ն Ե Ր
Պ Ե Տ Յ Թ Ի
թարգմանեց Քրանտերնէն
Ա. Տ-եան

Ա Ջ Ս Ա Վ Ա Ն Ե Ր Ե Ւ Ա Ն Ի Թ Ա Ն Ա Վ Ա Ն Ե Ր

Լողալ սորվելու համար պէտք է ջուրը նետուիլ բայց որքան երկար ատեն որ մարդ չգիտեր լողալու արհեստը, անհրաժեշտ են ազատման պարաններ և գործիքներ: Այնպէս ալ չարաւոր ազատութիւնը պէտք է ըլլայ այն զպրօքը, ուր մարդ պիտի պատրաստուի կատարեալ ազատութեան Մարդը բացարձակ ազատութեամբ օժտողը այնքան յիմարական վարժուէր պիտի ունենայ, որքան այն մարդը որ լողալ չգիտցող մը Ովկիանոսի մէջ պիտի նետէ, թողով զայն որ հեռաւոր եզերքը հասնի՝ միակ իր բազուկներուն ոյժովը: Այդ ազատութիւնը անոր համար ճակատագրական պիտի ըլլայ:

Ինչպէս գիւղացիները, Բարենորոգումէ վերջը իրենց պատերազմի մէջ, ինչպէս Անգլիոյ Լըվելէները և Հէպտիթիսները Ֆրանսայի մէջ, անիշ-

զում բարեգործութիւններով յայտնի բարերարի անուն վաստակելու համար: Մի խօսքով բարերարութիւն, կասկ, օգնութիւն և մեկնաստութիւն մեր հարուստը հասկացել և հասկանում է, այսպէս ասած, լէզալ հողի վրայ, որից դուրս գալը սարսափահար է անում նրան, չտեսնուած, չըլլաւած յիմարութիւն է անում: Ինչ նշանակութիւն կարող է ունենալ նրա համար այն յիսելազարներն ասածը, թէ հայ կեանքը այժմ ուրիշ պահանջներ ունի, ուրիշ կարեւոր և նշանակալից երեւոյթներ են ծագել, անհրաժեշտ և անյետաձգելի պահանջներ ասալ եկել, որոնց գոհացում տալն այժմ հայ ժողովրդի համար ճակատագրական և անխուսափելի անհրաժեշտութիւն է: Շատ պէտքն է հայ միլիոնատէրի, թէ՛ 19-րդ դարը Հայոց կեանքում ծնեցրել է ամենամեծ երեւոյթը-հայ յեղափոխութիւնը, որ ահագին յեղաշրջում, փոփոխութիւն է մտցրել ժողովրդի մը տաճելու, խորհելու եղանակի մէջ, նրա սրտի և մտքի վրայ բարերար ազդեցութիւն թողել, թարմացրել, ազնուացրել և կրթել: մի երեւոյթ, սակայն, որ հայ բուն ժողովրդի սիրտն ու միտքը ազնուացնելով հանդերձ, իրաւունք չէ համարել հայ մեծատան ապարանքները ներս մտնելու, այնտեղի խնջոյքները և ժողովիստների մեծազոր ազմուկները սարսափահար լինելով, մանաւանդ քաջ համոզուած լինելով, որ վրէժն տարով դուրս կը շարտեն այնտեղից, որ իւր տեղը և դասակարգը ճանաչէ, ամեն բաց դռնից ներս չմտնէ... (Շարունակելի)

Ս. Հայկազն

խանականներն ալ կը կանխեն իրենց ժամանակը: Ահա ասոր համար է որ իրենց վարդապետութիւնները ոչ պիտի կարողանան յաղթահարել և ոչ իսկ գործադրուիլ նոյն իսկ թէ վայրկեանարար տիրապետէին:

Բ Ա Ն Ի Ր Ա Կ Ա Ն Պ Ե Տ Ո Ւ Թ Ի Ի Ն Ե Ր

Ուրիշ կողմէ, անիշխանականութիւնը տրամաբանական հետեւանք մըն է պոլեթուական պետութեան՝ իւր ոյժը չարաչար գործածելուն և հետեւաբար հակազդեցութիւն մը ընդդէմ անարդար իշխանութեան մը: Մենք ամենքս ալ միեւնոյն զգուշանքը կը տածենք դէպի Պետութեան այս իշխանութիւնը: Բայց ասոր համար պէտք չէ ընդունիլ անիշխանականներու եզրակացութիւնները: Հարուստներու կատարելութեան անկատար ըլլալը պատճառ մը չէ որ մերթնէ կատարական յոյսը ձեւերը կատարելութիւններուն ժողովրդը ճնշած ըլլալը բաւական չէ հաստատելու համար թէ անեն ժողովրդական կատարելութիւն յոյս է և պէտք է հալածուի: Այս միեւնոյն սխալ գաղափարով սողորուած էին Լուսինսները:*) Ան-

*) Անպիտան մէջ հին բանաբանական խումբեր:

Տ Գ Ի Տ Ո Ւ Թ Ե Ա Ն Ք Ա Ղ Ա Ք Ա Վ Ա Ն Ո Ւ Թ Ի Ի Ն Ե Ր

— 0 —

Ամեն պարագայի մէջ սօցիալ-ալ-տէմօքրատները բնաւ պատճառ չունին վախնալու զանազան դատարկամիտ վարդօններու զլուելի զրպարտութիւններէն ու հայհոյանքներէն: Երբ հակառակորդը կը հայհոյէ ու կը զրպարտէ, այդ կը նշանակէ որ դուն ամուր կանգնած ես քու դաւանած ըսկըղունքներուդ հողին վրայ:

Եթէ մեր վէճին առարկան սկզբունք խնդիրներ չըլլային, մենք բնաւ ուշադրութիւն չէինք դարձնել, ինչպէս կըսեն Գերմանացիք, ումեռած շունն իրաւ հաշիւին, որոնք երբէք չեն կըրնար խոչնդոտ ըլլալ մեր խոյանքին դէպի այն լուսաւոր և պայծառ ապագան, ուր կը դիմէ այսօր ամբողջ քաղաքակրթութեան երկիրներու բանուր դասակարգը, անվեհեր, բուռն եռանդով և յեղափոխական սօցիալիզմի ջանքի ձեռնին: Ինչպէս կըսէ, մեր հանգուցեալ ուսուցիչը և յեղափոխութեան քաղաքի զինուոր Լիբքնիտ, սօցիալ-տէմօքրատները ո՛րքե՛ն մեկէ՛ն ու քանի՛ յեն վախճար: Երբ ո՛ճարժու՛մի խմբագիրը պ. Վարդօ անել ճամբայ մը մըանելով նեղը գրուեցաւ և ուրիշը տարրվեցա՞ր Վերանսութիւնի 8-9 թիւներուն մէջ զետեղուած մեր ոճգէտ մը վերնագրով յօդուածէն, ուր միմիայն ս'ըբունքի խնդիրներ կը շոյափուէին, — ուրիշը նման մի ոտիւնով ցատկից ու ընկաւ հայհոյիչներու աշխարհը, ուր նմանների գերկը և նրանց օրդան ոճարժու՛մի 540 թիւին մէջ՝ քաֆէշանթաններու գունդու վայել ոյստարարութիւնն մը հրատարակեց, ուղղուած մեր հասցէին, ուր խղճի սօ-

Ա. Յակոբեան

(Շարունակելի)

Թ Ղ Թ Ա Վ Ց Ո Ւ Թ Ի Ի Ն Ե Ր

— 0 —

Ն Ա Մ Ա Կ Է Ջ Մ Ի Ա Մ Ն Է Ն
Ռ Ո Ւ Ս Ա Ց Ա Մ Ե Ն Ա Ղ Ո Ր Մ Ա Ն Ջ Ա Ր Ի Ի Ր Ա Ց Յ Ե
Ե Ւ Ռ Ո Ւ Ս Ա Մ Ա Ց Ո Ց Ց Յ Ե Ր Ը

Այն օրէն երբ Ռուսաստանի թերթերը հաղորդեցին թէ՛ Մուլթան Ապախը-Համիտի խորթ եղբայր, ամենաողորմած ինքնակալ Նիկօլայ Ջարը ռախով մը (կայսերական հրաման) հրամայած է

ցիալիստ, fants սօցիալիստ, հիւանդ գրանցուել, fuaouայի եւ ցրալի վիճակում գտնուող ողորդ և այլն խօսքերէն զատ ուրիշ բան չկայ: Պ. Վարդօ, կերելի թէ՛ հայտերի քոստէն աւելի կատարելէք որ ձեր տկար տեղին դպելուն պէս հողեկան այնպիսի հիւանդոտ վիճակի մը կ'ենթարկուիք որ ոչ տրամադրվէք ասանկ փախուէրներ դուրս տալու: Մի՛... մի՛լա՛ք... արցունքնիդ սրբեցէք, պ. խմբագիր, որովհետեւ աստուք պէտք պիտի ըլլան ուսուցիչ-արտաւար, ոչ թէ միայն բանուր սիրելու ձեր թէօրիայի թաղման հանդէսը կատարած միջոցնիս: Եւ թէ ձեր արցունքներու աղբիւրը ցամքի, աւա՛ղ, անիկայ մեծ դժբաղդութիւն մը պիտի ըլլայ ուրիշ հայ ազգին համար, որովհետեւ միայն ուրամ ու զէնքսի վարդապետութեան բուռն պաշտպաններէն մէկն ալ պիտի չքանայ: Բայց միթաւուեցէք Նէօթէի սա խօսքերով, ուր ջանիկ է ան որ կուրայ և ոչ թէ ան որ լացած է:»

Ա. Յակոբեան
(Շարունակելի)

Թ Ղ Թ Ա Վ Ց Ո Ւ Թ Ի Ի Ն Ե Ր

— 0 —

Ն Ա Մ Ա Կ Է Ջ Մ Ի Ա Մ Ն Է Ն
Ռ Ո Ւ Ս Ա Ց Ա Մ Ե Ն Ա Ղ Ո Ր Մ Ա Ն Ջ Ա Ր Ի Ի Ր Ա Ց Յ Ե
Ե Ւ Ռ Ո Ւ Ս Ա Մ Ա Ց Ո Ց Ց Յ Ե Ր Ը

Այն օրէն երբ Ռուսաստանի թերթերը հաղորդեցին թէ՛ Մուլթան Ապախը-Համիտի խորթ եղբայր, ամենաողորմած ինքնակալ Նիկօլայ Ջարը ռախով մը (կայսերական հրաման) հրամայած է նիւր բազդին: Ոչ միայն սեփականութիւնն է որ զանոնք հեռու կը պահէ իրարմէ՛, այլ նաեւ իրենց ապրելու եղանակը, հաճոյքները, զարգացման աստիճանը: Քաղցր անգործութիւնը, ծուլութիւնը այնքան թափանցած է սեփականատէրերէ՛ շատերու ծուծին և ջիղերուն մէջ որ միայն ուժն ու բռնի միջոցները պիտի ստիպեն զանոնք կատարելու իրենց ընկերական աշխատութեան բաժինը: Անոնց չընայութիւնը այնքան հրապուրիչ կերեւի ժառանգազուրկներէն շատերուն որ այս վերջինները, ի սկզբան նոյն իսկ նուազ ծանր և քիչ աշխատութիւնը պիտի նկատեն անախորժ և պիտի ուզեն, իրենց կարգին, վայել բացարձակ անգործութիւնը, ինչ որ շատ հասկանալի է: Այս երկու հակամեթոտ դէմ պէտք պիտի ըլլայ մաքաւր Ուրեմի, առաջին ժամանակները, յեղափոխութեան յաղթանակէն յետոյ, լաւ օրէնսդրութիւն մը անհրաժեշտ պիտի ըլլայ:

Շարունակելի

Ռուսաստանի Լուսաւորչական հաս-
յոց բոլոր վանքերու և եկեղեցի-
ներու կալուածներուն և հասոյթ-
ներուն գրաւումը—այդ օրէն բու-
րը հայ ժողովուրդը յուշում
դրութեան մէջ կը պահուի և ա-
տոր արգիւնքն է որ ժողովուրդը
իր ցասումը ու բողոքը յայտնեց
այլևայլ ձևերու տակ՝ հանրա-
գրութիւն կամ յասուկ պատգա-
մաւորներ զրկելով էջմիածին:

Ամենաողորմածի ու քաղը նախ
քան թերթերու մէջ հրատարակ-
ուիլը արդէն պաշտօնական հե-
ռագրով մը ատոր ամփոփումը հա-
ղորդած էր էջմիածին. միևնոյն
ժամանակ տեղս եկաւ յայտնի
հայաստանց Գօլիցիինի և Վելիչ-
կօի հարապատ եղբայր և էջմի-
ածնի Սինոզի Պրօկուրոր՝ Քրիս-
տափոր Գանչելին: Սա սկսաւ դէս
ու դէն Սինոզական եպիսկոպոս-
ներու և վարդապետներու սե-
նեակները երթալով մտքերը
պատրաստել, որպէսզի ու քաղը
ընդունին և շուտով ստորագրեն
իրենց համաձայնութիւնը Յարի
ցանկութեանը համեմատ: Գան-
չելին ունեցաւ իրեն արբանեակ-
ներ՝ հանրածանօթ ազգագաւ Ա-
րիստակէս Գաւթեան և Մակար
Թարսուղարեան եպիսկոպոսները,
որոնք յայտնի համարձակ առանց
ամենափոքրիկ խցի խայթ մը
զգալու, կը քարոզէին միարա-
նութեան և կուչէին համոզել թէ
լաւ կը լինի եթէ ուսաց յանձ-
նուի մեր ազգային գոյութեան
իրաւունքները: Այս միջոցին Կա-
թողիկոսը էջմիածին շէր գտնու-
էր, օգափոխութեան համար ու-
րիշ տեղ զայցածէր: Նամակ գըր-
ուեցաւ և հեռագրուեցաւ իրեն որ
անյապազ վերագոռնայ Մայր-
Աթոռ, որը վտանգի մէջ է: Հայ-
րիկը ի գարձին կը հանդիպի
Գարա-Գիլիսէ կայարանը, ուր
պիտի նստէր շոգեկառք. այդտեղ
հայ ժողովուրդը խուռնեւրամ հա-
ւաքուած կը պուան և կը հրա-
ւիրեն հայրապետը մերժել կայ-
սերական հրամանը և ոչ մի հա-
ճութիւն տալ, հայ ազգը պատ-

րաստ է ամեն միջոց ի գործ
դնել իւր իրաւունքները անձեռն-
մխելի պահելու համար: Գնացքը
կը հասնի Ալէքսանդրապոլ, Կա-
թողիկոսը հոն կը գիշերէ. հետե-
կալ առաւօտ, յուլիս 25—ին ժամը
10—ին, երբ պիտի մեկնէր այն-
տեղէն Հայ ժողովուրդը յուշում
դրութեան մէջ կը գիմէ գէպի
առաջնորդարան, եկեղեցու զան-
գակներն կը հնչեցնեն հակառակ
եկեղեցականներու կամքին և կը
սկսին գոչել թէ «մենք մեր ար-
դար և դարերէ իվը ձեռք բե-
րած ու հաստատուած իրաւունք-
ները ուրիշին չենք տա՛ր» և կըս-
տիպեն Կաթողիկոսին որ մերժէ
և երբէք չընդունի այդպիսի ա-
ռաջարկ մը, որը հայութեան հա-
մար մահու և կենաց խնդիր է:
այսպէս գոռում գոչումով կը գի-
մեն մինչև երկաթուղոյ կայա-
րանը, մերթ Վեհ. ի կառքը ու-
սերնուն վրայ վերցնելով և մերթ
ոստիկանութեան հետ բաղխում
ունենալով, որ կուչէր ամբողջ
ցրուել, բայց ի զուր: Ամենգա-
սակարդի կանանց և տղամարդ-
կանց հոծ բազմութիւն մը ճա-
նապարհ կը դնէ Կաթողիկոսին:
Նոյն օրը կը ձերբակալուի Պ. Ա.
Վատունի անուն մի մարդ, բայց
յես քննութեան ազատ կարձա-
կուի:

Մինչև Կաթողիկոսի գալը,
արդէն անցած էին մի քանի օ-
րեր և այդ ժամանակամիջոցին
միաբանութիւնը մի քանի ան-
գամներ կարծիքներու փոխանա-
կութիւններ ունեցաւ: Վերջիչ-
եալ երկու ազգագաւ եպիսկոպոս-
ները գրեթէ մեծամասնութիւնը
համոզել յաջողած էին: Պրօկու-
րոր Գանչելին ալ Սինոզի նախ-
կին ծառայող մատնիչ Սինոն վար-
ժապետի տանը տրախութեան
խորխոսանքի մէջ կը յղկանար.
սակայն «յերեկին արեգական
կորնչին աստեղք» Վեհափառը
եկաւ, անմիջապէս ամբողջ միա-
բանութիւնը ժողով գումարեց ու-
րոշելու համար թէ ինչ պէտք է
ընել, որովհետև Հայրիկը բացար-

ձակապէս որոշած էր մերժել և
քննա երբեք քանի դեռ ինքը կեն-
դանի է չընդունել այդ տեսակ ա-
ռաջարկութիւն մը, ուստի հար-
ազրուած եղան բոլորն ալ նոյն
գիրքը բռնել և ամբողջութեամբ
վտարահանելու քուէ տունին Հայ-
րապետին: Նոյն օրը Պրօկուրորը
(գտտախաղ) ևս ներկայացաւ նո-
րին Վեհութեան և հաղորդեց
Յարի հրամանը, իսկ Կաթողիկո-
սը յանդիմանելով դուրս բրա-
զայն Վեհարանէն, բացարձակա-
պէս մերժելով բերած պատգամը,
այս բոլորին պատճառ Գանչելին
նկատելով: Այս անգամ չարամիտ
հայաստանց Պրօկուրորին «ոտքե-
րը ջուրը հասանա», ինչպէս կըսէ
ժողովրդական առածը, մի քանի
օր առաջ հարանիքի ուրախու-
թիւնը ունեցող պարոնը այժմ
կորագլուխ և յուսախաբ եղած
հեռացաւ էջմիածին:

Օգոստոսի 3—ին (հ. տ) առաւ-
օտեան ժամի 11—ին Պատարագի
արարողութեան ժամանակ, Երե-
անի հայութիւնը մեծ բազմու-
թեամբ կը գիմէ քաղաքին կեդ-
րոնը գտնուող Լուսաւորիչ անուն
եկեղեցին, ուր այդ օր քարոզ
կը խօսի տեղւոյն առաջնորդ Գեր.
Սուքիաս Արքեպիսկոպոս Պարզ-
եանցը, հանգուցեալ Մելքիսե-
դեկ Արքեպիսկոպոս Մուրատեա-
նի մասին: Արարողութենէ յետոյ,
ժողովուրդը կսկսի գոչել և խըն-
դրել Սրբազանէն որ իրենց հետ
ընկերացած երթայ էջմիածին,
որպէսզի յայտնէ Կաթողիկոսին
իրենց անհամաձայնութիւնը ու-
քաղի մասին: Սրբազանը իսկզբան
հակառակած և մերժած է ընկե-
րանալ, բայց հազարաւոր մարդ-
կանց ստիպման վրայ՝ համակեր-
պելով ճանապարհ կիլիսայ գէպի
էջմիածին, որ կը տեէ 4 ժամ:
Այս բաւականին հեռաւորութիւն
ունեցող ճանապարհը, ամբողջ
առանց ճաշելու և ոտքով քալի-
լով, երբեմն երբեմն խոչնդոտնե-
րու ալ պատահելով, կը յառա-
ջանայ: Երեւանէն սկսեալ մի խումբ
խաղախ ձիաւոր զօրքեր կը հե-

տապնեն, մի քանի տեղեր ճա-
նապարհին ամբոխին առաջը կը
կտրեն, սակայն հայերը իրենց
համար ճանապարհ բանալով միշտ
կը յառաջանան և կը հասնին Վա-
ղարշապատի մօտ գտնուող այգի-
ները: այստեղ խումբ մը հետե-
ւակ զօրքեր ալ օգնութեան կը
հասնին ձիաւորներուն և կսկսին
հրացանաձգութեան օգի մէջ, որ-
պէսզի բազմութիւնը ցրուի, բայց
անօգուտ: Իսկոյն վանքի միա-
բանութենէն 4 հոգի զրկուեցան
ընդ առաջ, որպէսզի երկուստէք
հանգարտեցնեն և ծանր կերպա-
մէն եղած արգար և խա-
ղաղ ցոյցը: Ահա այսպէս Երեւ-
անի հազարաւոր հայերի բազմու-
թիւնը կը հասնի գիւղ, որուն
ընկերացան նաև ամբողջ Վաղար-
շապատցիք և գիմեցին Վեհա-
րան: Հայ ամբոխը միահամուռ կը
գոչէր «Վեհափառը պէտք է դուրս
ե՛լլէ, պէտք է բազմել և մեր-
ժե՛լ»: Կաթողիկոսը Վեհարանի
պատահանէն կարճ խրատական
մը խօսեցաւ և հանդարտեցուց
ժողովուրդը ըսելով որ այդ տե-
սակ առաջարկ մը ինքը երբէք
չընդունիր և չստորագրիր: Ամ-
բոխը կե՛ցցէ Վեհափառը, կե՛ցցէ
Հայրիկը գոչելով ցրուեցաւ:

Այժմ հեռագրով հրաւիրուած
են Ռուսաստանի մէջ գտնուող բու-
րը առաջնորդները, որոնց ներ-
կայութեամբ, ամսոյս 10—ին, խոր-
հուրդ պիտի կազմուի և խնդրա-
գիր մը խմբագրելով՝ մասնաւոր
պատգամաւորութեամբ մը պիտի
զրկուի Յարին: Խնդրագրոյն և
պատգամաւորութեան առաջումը
ինչ հետեանք որ ունենայ կը
խոստանամ իւր ժամանակին Ձեզ
տեղեկացնել:

Ժիրալ
1903 Օգոստ. 4/17
էջմիածին
Յ. Գ. Այսօր բազմաթիւ զօրքեր
եկած են այստեղ: Երեւան բազմաթիւ
ձերբակալութիւն տեղի կուենայ:
նոյն

**ՌՈՒՍ-ԱՌՍՏՐԿԱՆ ՔՈՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ
ՊԱԼՔԱՆԵԱՆ ԹԵՐԱԿՂՁԻՆ ՄԷՋ**

«Այն ատեն (Սան Սթեֆանեան դաշ-
արքին մէջ, Մ. Հ.) կըսէ «Եւզօս-
թի լրագիրը այս տարուան փետրվա-
րի թիւերէն միտն մէջ, մեծ սխալ մը
գործուեցաւ այն եկրպորտներու որ ե-
րկ Պուլխարիս ճիւղ եւրոպական թուր-
կոյ մեծագոյն ճիւղին, ան պիտի դառ-
նայ հաստատ կառուար մը Ռուսիոյ հա-
ւաս դեպի Կ. Պոլիս: Բայց մեծ եղաւ
պատահալը: ԲԱՐԵՐԱՂՆԱԲԱՐ, Պերիկի
պաշտպանը ստիպուալ դրած եր Պուլխա-
րիս անտրոմակին, ապա թե ոչ Ռու-
սիս գործ պիտի ունենար աւելի մեծ
Արաւոյթօրոյ խառնուրդ մը: Ուրեմն Ռուսիս
պիտի է վերջ դնէ Պուլխարիս մեծա-
ւորութեան...»

Ասկէց կ'սկսի Պալքանեան թերա-
կոյնի մէջ այն ուսական կործանա-
ւոր քաղաքականութիւնը, որ կը հիմ-
նուի երկու ամօթալի սկզբունքներու

վրայ. divide et impera (բաժնէ ու
տիրէ, Հ.) եւ Statu quo-ի պահպանու-
մը: Ան հարկադրուած էր այսպէս գոր-
ծել հետեւեալ նկատողութիւններով:

Առաջին, Թուրքիան ու Վոսփորը
յախշտակելու գիւրադարական վայր-
կեանը գեռ այսօր նպագատուր չէ, ո-
րովհետև Անգլիա, Աւստրիա, Իտա-
լիա ձեռքերնին բաց կ'սպասեն և
Ռուսիոյ ամենափոքր մէկ շարժումը
յառաջ կրնայ բերել նոր ու ալ աւելի
սոսկալի քրիմական քաթաղք մը:

Երկրորդ. Ան սոսկումով կը գիտէ թէ
ինչպէս—մինչդեռ ինքի զուր կը վառ-
նէ իր ոյժը Վոսփորին համար, — «նեն-
գամիտա Եւրոպան ոչ միայն հաստատ
կը պահպանէ այդ Վոսփորը այլ եւ ա-
զատ համարձակ կը շրջի Չինաստանի,
Հարաւ — Արեւելեան Ասիոյ, ու Աֆ-
րիկէի մէջ: Մինչև որ Ռուսիս մտնէ
Կ. Պոլիս, Եւրոպա պիտի աւարտէ իր
«քաղաքակրթական» դերը միւս եր-
կրներու մէջ եւ այն ատեն Վոսփորը
Թրքական ջարհա մը իսկ չպիտի արժէ:

Ռուսիոյ համար

Երրորդ. նոյն ինքն Ռուսիոյ ու
Ֆինլանտիոյ մէջ բանտրներու, ու-
սանողներու և գիւղացիներու սպառ-
նական շարժումները աւելի ու աւելի
խիստ կերպով կը ցնցեն ուսական
ցարկով մի հիմքերը եւ ատոր ահ ու սար-
սափ կ'աղղեն յառաջ գալիք ուրակա-
նին առջեւ...:

Ուստի, այս բոլոր ևս դեռ շատ մը
ուրիշ նկատողութիւններով ու պատ-
ճաններով, Ռուսիս 80—ական թու-
ականներու կէսէն սկսելով, ստիպու-
ած է ամենէն մոտեանց երկրպագուն
ըլլալ վերոյիշեալ քաղաքականութեան
որ կրնայ ամփոփուիլ հետեւեալ կէ-
տերու մէջ:

Ա) Պանպակեղ, իրեւ սպագայ ժա-
նակագրիկ, Թուրքիոյ անկողնաբիւնը,
նպաստել անոր ներքին ասիանաւոր
կազմաւորման և աւելի զայն ուսու-
նակ «պաշտպանութեան» սակ. Բ.) պան-
պակեղ պաշտպանութեան թերակրթի Statu
quo-ն, անդադար խոսիւթիւններ ձը-

ղելով պաշտպանել իշխանապետիւն-
ներու մեջ, զանեղ ներքինապետ սխաւ-
ցելով ևս ուսական «խեղճակաւոր-
քիւն» սակ ղեկով. Գ.) Եւրոպական
հաստատութիւնը քայքայել և Թուրքիոյ
վրայ յարձակելու յարուս փայլեան որո-
նել ևս Դ.) զանազան յայտնի ու զայնեի
դաշնակցութիւններ հաստատել Թուրքիոյ ու
Աւստրիոյ հետ սպագայ յայտնի սկսելու
յարիւններու հարաւ:

Բայց Պալքանեան խաղաղութե-
նէն ու Statu quo-էն — թիւ բոլորո-
վին հակառակ շարժումներէ մղուած
— Եւրոպա ալ մեծ պէտք ունի Մա-
կեդոնական, կամ ճիշդը Վոսփորական
հարցը անոր համար ծանր կ'լին մըն
է, որ կը տկարացնէ անոր ոյժերը՝ ու-
սական ուսնազութիւններուն դէմ մըզ-
ուած անվերջ պայքարին մէջ եւ կը
կապէ անոր ձեռքերը գաղթային քա-
ղաքականութեան համար:

Բարգ. Շահպազ
(Շարունակելի)

Պ Բ Ե Ռ Ի Ն

1898 թ. մի օր, Բ... քաղաքի մի պարտիզում Գեորգի Հեա ծանօթացայ ու երկար խօսակցութիւն ունեցայ:

Հ. Յ. Գաշնակցութիւնը այդ ամառ կողկասի Մ... քաղաքում ընդհ. Պատգ. ժողով ունէր ու հէնց այդ առիթով էլ Գեորգի կողկաս էր եկել: Գեորգի Բ... քաղաքում բաւական ժամանակ սպասեց և բանակցութեան մէջ էր Հ. Յ. Գաշնակցութեան հետ, որ պէտքի նրանց օգնութեամբ ճանապարհի դէպի իւր սիրելի լեռները, այլ սակայն ուսպատել և յուսալէնս ճանձրացած ու սրբունեղած, միանգամայն տեսնական խիստ տագնապէ բռնած՝ մեկնեց Մ... քաղաքը, որպէսզի վերջ տայ իւր այդ յիմար կացութեան:

Մի քանի ամիսներ յետոյ ես ևս գնացի յիշեալ քաղաքը: Թէև մտքիցս չէր էլ անցած Գեորգի մի անգամ ևս տեսնալ, սակայն... Գեորգի այնտե՛ղ էր:

Այս անգամ նրան գտայ խիստ յուզւած նոյնիսկ լարուած Հ. Յ. Գաշնակցութեան դէմ ընդհանրապէս և այլևայլ անհատներին դէմ մասնաւորապէս, որոնք (ըստ իւր ասութեան) չը նայած իրենց աւած խոշոր-խոշոր խոստումներին խուսափում էին մի որոշ պատասխան տալ, որովհետև այլևայլ նրախոսումներ կային, օրինակ թէ Գեորգի մի կողմէ մարդ էր, թէ իրանց սպասածը? դուրս չէր եկել ևն, ևն:

Իրիկուն մը մեր Գեորգի մի այլ ընկերով (պարոն Ա... ի) հետ եկաւ ինձ մօտ իւր գարգերի սոպրակը բաց անելու (որի վրայ չեմ ուզեր կանգ առնել առ այժմ): Գրեթէ ամբողջ գիշերը, մինչ ի լոյս նա պատմել ու գանգատել է Հ. Յ. Գաշնակցութեան մասին, ցոյց տալով այն ազդի վերաբերմունքը, որ Գաշն. ընկերներն էին ցոյց տել: Նա բոլորքս ու կատաղած շարունակ ա՛յլ քաջելով ասում էր «ինչո՞ւ ինձ, Գեորգի խաբեցին ու բերին այս տեղերը վերադառնալ ըրին»: Գեորգի հետ Տերտիմով եղող Պառաւն էր, չը մոռնամ յիշել թէ, կողկասի մի այլ քաղաքում գարձեալ նոյն ձևի ու կեանքի մէջըրած, նոյն և աւելի բուռն գանգատներ էր յայտնում նոյն այդ կուսակցութեան մասին, և որը կարծում եմ քաջութիւնը ունի ի հարկին մէջտեղ գալու և մի շարք հարցեր լուսարանելու:

Ես մինչ այդ՝ Գեորգի անցեալին մօտ ծանօթ չէի, սակայն այդ իսկ երեկոյեան նա պատմեց, որ ինք առաջին անգամ որ Յեղափոխութեան մէջ մտաւ՝ Հին չակեանների հետ սկսաւ գործել ու գործեց Ե. Գ... ի շրջանակում բաւական երկար ատեն և խոստացաւ երկիր մտնելուց, ձեռք

տալ այնտեղ եղող Հնչակեան ընկերներին ու տեղական կողմակերպութեան:

Գրանից 1—2 ամիս յետոյ իմացայ, որ Գեորգի երկիր է մտել Մ... աւա՛ղ, այդ վճռական քայլին էլ հանդիպեց մի շարք խոշոր գոտներին ու Գեորգի անկարող եղաւ իւր սիրեցեալ սարերն ու ձորերը մի անգամ ևս տեսնալու: Իրերի այս գրութեան և հոգեկան այս ո՛չ մի թիթարական վիճակի մէջ, Երզնկայի բանակի ընդհ. հրամանատար Չեքի փաշայի ետևիւր և մի ոմն Հայ հաբուստ՝ կաշխատեն փայլուն խոստումներով Գեորգիին համոզել, որ նա յանձնուի կառավարութեան, այն օրով որ վեհ. Սուլթանէն ներդրուի կ'ըստանայ:

Եւ Գեորգի խաբեցու յանձնելուց Գաշն. Չեքիին...:

Այժմ կը կարդանք, կը լսենք. «Գեորգի կախցի»-ն: Դառն և ողբերգական վախճան հերոսին. Լացէ՛ք սարեր ու ձորեր Տերտիմի, լացէ՛ք, զի չի կայալու ձեր սիրելի Գեորգին, ձեզ անմահացնող հերոսը...:

Պարտք եմ համարում շեշտել հետեւեալ կէտը:

Այն պահուն, երբ Գեորգի Տերտիմի լեռներում հերոսական կռիւներ էր մղում, երբ իւր անվերջը ընկերներով Երիզայի շրջանում ահաւարտաբէր էր գցում, այո՛, այդ պարագաներում Հ. Յ. Գաշնակցութիւնը — նրանց կամիտներն ու գործիչները — իրենց բանաւոր թէ գրաւոր փառաբանութիւններով ականջ խրատելու աստիճան թմբակահարում էին ու նոյն իսկ իհարկին նրա անուշով հանգանակութիւններ անում, այլ սակայն նրանք, իրանց վաղեմի ու աւանդական դարձրած սովորութեան համաձայն՝) — չուշացան հէնց նոյն, երբ կայ հերոս հռչակած Գեորգին, կողկասում եղած ժամանակ թողնելու՝ որ նա մի քանի անգից պատառուած ու կարկուտ վարտիկով կամ վրանոցով ման գար. այո՛, շեշտում եմ այս պարագան, որովհետև զեռ թարմ են Գեորգի խօսքերը թէ «ես Գեորգի ինչեմ և այսպէս մուրացիկի գրութեան մէջ... և Գեորգի շատ անգամ ամաչելուց սենեակից դուրս չէր գալիս և կամ գիշերներն էր գուրս գալիս:

Ու այսպէս Տերտիմի առիւժը, մասնաւորապէս գաշնակցական ներիցարհամարած, մտաւ երկիր, մտածելով, որ լաւ էր այնտե՛ղ

) Սասունի հերոս Մուրադը, Սասուն անցնելիս կողկաս մը առաւ, ուր ևս գիտեց Հ. Յեղափ. Գաշնակցութեան, խնդրելով որ գրածով զէնքով ելն իրան աջակցեն Գաշնակցութիւնը Մուրադի անց, «Գաշնակցական եթէ լինես քեզ կօգնենք, եթէ ոչ՝ չենք կարող», ու Մուրադը լուստակով միանգամայն այդպիսի օգնութիւնը՝ յառաջ խաղաց դէպի Սասուն, ու այսօր հեծում է ծանրածանր շղթաների տակ, 1908 թ. 8:

դնալ մեռնիլ — թէ կողկ կախազանի վրայ, քան Գաշնակցութեան աւած գուրս յոյսերով կողկասում թափառիլ:

Ու այս լայրից յետոյ, զարմանքով տեղեկացայ թէ «ճարժոպառ» գրած է եղել, որ Հին չակեաններն են եղած նրան մտանոցը!!! Բայց այսպէ՛ս է, «ճարժոպառ» կարո՞ղ է այդ մասին փնտրել մի բան, որ «ճարժոպառ» փաստեր ունի, հասցա ինչս' անախ փաստը չի հրատարակեց ու այդպիսի մեղկ կերպով լուրը բաց թողեց: Ա՛հ, զգե՛լի է իսկապէս մեր միջավայրը, բայց ևս առաւել զգե՛լի են բոլոր անոնք՝ որոնք իրենց բան-գործ ըրած են սրան նրան բաժնասելու մրտաբէր: Այսպիսիները խօսում, գրում են Յեղափոխութեան անունից...:

Հրատարակուած

Ն. Ս. Մ. Ա. Կ. Ս. Օ. Ֆ. Ի. Ա. Յ. Ի. Ն. — Օ — (Մեր մասնաւոր թղթակցին) 22 Օգոստ. 1903.

Նախորդ թղթակցութեամբս հաղորդած էի Մակեդոնիոյ մէջ դէպքերուն հետզհետէ ծանր կերպարանք մը առնելը: Եւ արդարեւ օր չանցնիլ որ հեռագիրը չհաղորդէ նոր ապստամբական դէպք մը: Նորագոյն դէպքն է Նեպէսքա լեռան մէջ պատահած կռիւը, ուր մասնակցութիւն ունեցած է 700 հոգի է լազկացած թրքական գումարտակ մը, որ կատարեալ պարտութիւն կրած է ապստամբական հրոսակախումբէն՝ երկարատե ճակատամարտէ մը յետոյ:

Թրքական աղբիւրէ հասած լուրերը մասնաւորապէս ծանր կը ցուցնեն Լօզէնկի քաղաքի գաւառին վիճակը, ուր ապստամբական հրոսակախումբերը ցանցի պէս տարածուած են և իրենց յանկարծական յարձակումներով մեծ կուրուստներ կը հասցնէին թուրք զօրքերուն: Անցեալները Մալքոթի թրքերը քովերը տեղի ունեցած են քանի մը ընդհարումներ, ուրոնք ստիպած են նոյն շրջանակի բնակչութեան լեռները ապաստանիլ և այդ դէպքերուն առիթիւ Լօզէնկի քաղաքի հրամանատար Ֆէխմի փաշան պաշտօնանկ եղած է:

Իսկապէս կը հեռագրեն որ՝ ապստամբական շարժումներուն ծաւալման պատճառաւ, հրամայուած է իրենց կողմէ 52 գումարտակ ընտրելի և իրազէի պատկանողները, որոնք թմբակներով կը պատին նահանգին քաղաքներուն մէջ և իրենց բռնութիւնները ի գործ կը գնեն քրիստոնեայ ընտանիքներն վրայ:

Սլոբո՛ւրցայի շրջը ապստամբներու և թուրք կանոնաւոր զօրքերու միջև պատահած կռիւը

խիստ վառ գոյներով կը նկարագրեն տեղի թերթերը. այնպէս որ թուրք զինուորները ի վերջոյ թողլով ամեն բան ճակատամարտի դաշտին վրայ՝ կըսկսին ցիւխիլ:

Առանց մեկնաբանութեան կը հաղորդեմ Պալլըկէն ստացուած հետեւեալ հեռագիրը. «Ախտարօ լին դրաւուած է արտատմբներու կողմէն, որոնք մտնելով քաղաք ու մտնելով քանդակ ցին ըստը կառավարական հաստատութիւնները: Թուրք պաշտօնականները և բնակչութիւնը Պոլիս փախչելով վրայ են: Ապստամբները առժամանակեայ կառավարութիւն մը հաստատեցին և քաղաքին երեւելիներէն յանձնարարութիւն մը կազմեցին, որ պիտի վարէ բոլոր գործերը»:

Մանասթըրի նահանգի մէջ վերջերս պատահած արիւնահեղ ճակատամարտի մը միջոցին 4 Մակեթոնացի Վոլոյփոստաններուն սպաննուած ըլլալը, պաշտօնապէս կը հաստատէ Պոլէն քաղաքի հեռագիր մը: Թղթակցութիւնս փակելէ առաջ հաղորդեմ և վերջին լուրը, որու համեմատ Միտիա քաղաքն ալ գրաւուած է ապստամբներուն կողմէ:

X. X.

«Փալաստի թիւ 64-ին մէջ ՊԱՆԿՈՂՆԱԿԱԿ ԿԵՂԺ անունին տակ ծածկուող ողորմելի մը իր հիւանդոտ երեակայութեան մէջ միայն գոյսով ինչ ունեցող կարող մը «գիշերային խօսակցութիւններու առասպելներ կը պատմէ, որոնց վրայ կանգ առնուանգամ շարժէր:

Եթէ մեր հակառակորդներուն մտաւորական մակարդակը այնքան ցած է որ փոխանակ կուսակցական սկզբունքներու հողի վրայ պայքար մղելու, կըրքաղին այլևայլ անձնաւորութիւններու կուսակցական գործունէութիւնը մըրտելով, գէթ քաջութիւն ունեան հրապարակ գնել անհերքելի ու վաւերական փաստեր, ինչպէս ըրաւ Հնչակ. Կ. թիւնը, որ Այֆաբիտտական առաջակային կազմակերպութեան բոլոր գիւսային ծրագիրները հաստատող վաւերաթուղթեր հրատարակեց և պիտի հրատարակէ ալ:

«Փալաստ» և իր «Անկողնակալները անկարող են այդ ճամբով ընթանալ, որովհետև ըստ ըստներէ ու առասպելական պատմութիւններէ անցին չեն անցնիր: Եւ այդպիսի գաճաճներուն կողմէ մեզ ուղղուած հարուածները կը ծառայեն միմիայն մեր արժանիքը բարձրացնելու հասարակութեան առջև: